# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» Սեպտեմբերի 2024 **թվականի** N 399-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար բաց մրցույթի միջոցով Գյումրի համայնքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Վարդան Կարապետյան – «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Մկրտիչ Թումասյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գործակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

**2024թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 թվականի N398-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հանձնաժողովի նախագահ՝
   1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի խորհրդական,
   Հանձնաժողովի անդամներ՝
   2) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,
   3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
   4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,
   5) Մանե Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,
   Հանձնաժողովի քարտուղար՝
   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

**2024թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 397-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԿՐՏԻՉ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 188 21/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մկրտիչ Ղարագյոզյանին (ՀՎՀՀ՝ 82247732, գրանցման ամսաթիվը՝ 02.09.2013 թ.) 2024 թվականի հունվարի 25-ին ներկայացրած հայտը համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 25-ին 1434-2024 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մկրտիչ Ղարագյոզյանին Գյումրի քաղաքի Շահումյան 188 21/1 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Մկրտիչ Ղարագյոզյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 **թվականի** N396-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՄԼԵՏ ՄԵԼՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Համլետ Մելոյանի (ՀՎՀՀ՝ 57256088, հաշվառման ամսաթիվը՝ 12.03.2008թ.) 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2057-2024 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Համլետ Մելոյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Համլետ Մելոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__09__» __փետրվարի__ 2024 **թվականի** N__395__-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՍԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արսեն Այվազյանի (ՀՎՀՀ՝ 57319201, հաշվառման ամսաթիվը՝ 12.01.2017թ.) 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2061-2024 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արսեն Այվազյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արսեն Այվազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 394-Ա

**«ԿԱՐԱՏ ԹՐԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱԲՈՎՅԱՆ 218/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Արշակ Քոսյանի (ՀՎՀՀ՝ 02874778, գրանցման ամսաթիվը՝ 19.09.2022 թ.) 2024 թվականի հունվարի 31-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 31-ին 1924-2024 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Գյումրի քաղաքի Աբովյան 218/1 հասցեում իրականացնել ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Արշակ Քոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X [signature] Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 393-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՆԻԿ ԱՍՐԻԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վանիկ Ասրիկյանի (ՀՎՀՀ՝ 57256543, հաշվառման ամսաթիվը՝ 25.03.2008թ.) 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2055-2024 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վանիկ Ասրիկյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վանիկ Ասրիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 392 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Կիրակոսյանի (ՀՎՀՀ՝ 57256844, հաշվառման ամսաթիվը՝ 07.04.2008թ.) 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2068-2024 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հակոբ Կիրակոսյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Կիրակոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 391-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԱՎԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանի (ՀՎՀՀ՝ 57256122, հաշվառման ամսաթիվը՝ 12.03.2008թ.) 2024 թվականի փետրվարի 05-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 05-ին 2117-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 390-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արա Խաչատրյանի (ՀՎՀՀ՝ 57256114, հաշվառման ամսաթիվը՝ 13.03.2008թ.) 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2063-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արա Խաչատրյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արա Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.02.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 թվականի № 389-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 1157,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաքաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շ. Տալյան փողոցի հարևանությամբ գտնվող 1157,8 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Տալյան փողոց, 5/14 հողամաս**

Недействительная подпись
X
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 թվականի № 388-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 179,91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1221-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շ. Տալյան փողոցի հարևանությամբ գտնվող 179,91 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1221-0001) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Տալյան փողոց, 5/13 հողամաս**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» [illegible] 2024 թվականի №387-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 4/47 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0069), ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 4/48 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0068) ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 4/49 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0070) ԵՎ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 4/50 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0071) ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամաս 4/47 (կադաստրային ծածկագիր 08-001-0125- 0069), Մուշ-2 թաղամաս 4/48 (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0068) Մուշ-2 թաղամաս 4/49 (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0070) և Մուշ-2 թաղամաս 4/50 (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0071) հասցեագրությամբ հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 6 հողամաս**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 386-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑԻ N 8/1 ՀԱՍՑԵԻ 22.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/1 հասցեի 22.5 (քսաներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/1 հասցեի 22.5 (քսաներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

09.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» [illegible] 2024 թվականի № 385-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՔՈՒԹԱԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2007195) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տաթևիկ Իգիթյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2328 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Քութաիսյան փողոց, 2 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2007195) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 6-րդ նրբանցք, 2/2 բնակելի տուն**

Недействительная подпись
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 թվականի № 384-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05–Ի №303-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 05–ի «Գյումրի քաղաք, Գերցենի փողոց, 1/2 հասցեի առևտրի և սպասարկման օբյեկտին կից գտնվող 74,2 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 74,2 քառակուսի մետր արտաքին մակերեսով անավարտ հասարակական նշանակության շինությանը համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №303-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. որոշման կայացման մեջ վերջին տողում «1/3» թվերը փոխարինել «1/35» թվերով:

Недействительная подпись
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2024 թվականի N 383-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԻՎ 18 ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 1231-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով <<Նյու Սիթի Տրանս>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հակոբյանի 06.02.2024 թվականի թիվ 29 գրությունը ուղղված Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովին՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 18 միկրոավտոբուսային երթուղու՝ (այսուհետ երթուղի) կանոնավոր փոխադրումների սպասարկման իրավունքը ժամանակավորապես վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու ավտոբուս» ՓԲԸ-ին:

**2.** Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 8-ի թիվ 12 արձանագրությունը հաստատելու մասին>> N 1231-Ա որոշումը:

**3**. Լուծել երթուղու սպասարկման համար «Նյու Սիթի Տրանս» ՍՊԸ-ի հետ կնքված 25.07.2021 թվականի միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման թիվ 10 պայմանագիրը:

**4**. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Նյու Սիթի Տրանս>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հակոբյանին և <<Գյումրու ավտոբուս>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Անդրիասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ.**
**Ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» փետրվարի 2024 թվականի N 382-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԻՎ 14 ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 1231-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով <<Նյու Սիթի Տրանս>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հակոբյանի 06.02.2024 թվականի թիվ 28 գրությունը ուղղված Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովին՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 14 միկրոավտոբուսային երթուղու՝ (այսուհետ երթուղի) կանոնավոր փոխադրումների սպասարկման իրավունքը ժամանակավորապես վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու ավտոբուս» ՓԲԸ-ին:

**2.** Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 8-ի թիվ 13 արձանագրությունը հաստատելու մասին>> N 1231-Ա որոշումը:

3. Լուծել երթուղու սպասարկման համար «Նյու Սիթի Տրանս» ՍՊԸ-ի հետ կնքված 07.08.2020 թվականի միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման թիվ 5 պայմանագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Նյու Սիթի Տրանս>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հակոբյանին և <<Գյումրու ավտոբուս>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Անդրիասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ.**
**Ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի **2024 թվականի №** 381-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 122Ա ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 252,23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 132,95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 05-ի №298–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Աթարբեկյան փողոց, 122ա հասցեի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 252,23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 132,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Աթարբեկյան փողոց, 122/6 շինություն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ x ________ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

09.02.2024

2024 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2024 **թվականի** N 380-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 3255-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին (3/4 մաս) և Ռիտա Սուրիկի Մատինյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 153 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 76.84 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին» N 3255-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին (3/4 մաս) և Ռիտա Սուրիկի Մատինյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 153 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 76.84 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին» N 3255-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին և 2-րդ կետերում «3/4» և «1/4» թվերը համապատասխանաբար փոխարինել «2/3» և «1/3» թվերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2024 **թվականի** N 379-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 445-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդներ կազմակերպելու համար աճուրդային հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը հաստատելու և աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին» N 445-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով՝

1) Սուրեն Ջանոյան - Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ
2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
3) Հովհաննես Սահակյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,
4) Արմենուհի Չախոյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
5) Տիգրան Հովհաննիսյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
6) Կարեն Մալխասյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
7) Քնարիկ Հարությունյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
8) Կարեն Սոսյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
9) Նարեկ Միրզոյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
10) Սահականուշ Գրիգորյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գործակալ:»

2. Նշանակել՝

1) աճուրդավար՝ Սուրեն Ջանոյան
2) արձանագրող՝ Սահականուշ Գրիգորյան

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աճուրդային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись
X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**
**«_09_» _փետրվարի_ 2024 թվականի N_378_Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի N 1903-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի <<Քաղաքացի Գեորգի Մամիկոնի Հովհաննիսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չերազի փողոց N 2 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող գտնվող 162,20 քառակուսի մետր մակերեսով հողամասի, նրա վրա առկա շինության և սեփականության իրավունքով իրեն պատկանող տան ինքնակամ փակված 2 դուռը, ինքնակամ բացված 2 դուռը օրինական ճանաչելու մասին>> N 1903-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 10/10/2023 թվականի Կ-10102023-08-0138 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի <<Քաղաքացի Գեորգի Մամիկոնի Հովհաննիսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չերազի փողոց N 2 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող գտնվող 162,20 քառակուսի մետր մակերեսով հողամասի, նրա վրա առկա շինության և սեփականության իրավունքով իրեն պատկանող տան ինքնակամ փակված 2 դուռը, ինքնակամ բացված 2 դուռը օրինական ճանաչելու մասին>> N 1903-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) որոշումը լրացնել $1^1$. կետով հետևյալ բովանդակությամբ.
   2) <<$1^1$. Ճանաչել քաղաքացի Գեորգի Մամիկոնի Հովհաննիսյանի (ծնված 1955 թվականի հուլիսի 04-ին) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Չերազի փողոց N 2 հասցեում գտնվող 118,3 (մեկ հարյուր տասնութ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:>>:

09.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«09» փետրվարի 2024 թվականի N 377-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 13-ի <<Քաղաքացներ Էդուարդ Խալիֆյանին 1/2 մաս և Նաթելլա Խալիֆյանին 1/2 մաս ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե փողոց N 76 հասցեի տան ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 2 դուռը, ինքնակամ բացված 1 բացվածքը օրինական ճանաչելու, սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 111,5 քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին>> N 289-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի <<Քաղաքացներ Էդուարդ Խալիֆյանին 1/2 մաս և Նաթելլա Խալիֆյանին 1/2 մաս ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե փողոց N 76 հասցեի տան ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 2 դուռը, ինքնակամ բացված 1 բացվածքը օրինական ճանաչելու, սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 111,5 քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին>> N 289-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023U2GXZR և 2023PBRZP ծածկագրերը>> բառերը և թվերը:

09.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2024 **թվականի** N 376-Ա

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ ՏՐՎԱԾ N27/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին և Գյումրու համայնքապետարանին Խանջյան և Չայկովսկի փողոցների վերակառուցման համար 2023 թվականի մարտի 24-ին տրվել է N27/23 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2023 թվականի մարտի 24-ին տրված N27/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի ապրիլի 30-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

07.02.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2024 **թվականի** N 375-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՒՆԵ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 54 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Նունե Ասլանյանի 2024 թվականի փետրվարի 02-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 02-ին 2053 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Նունե Ասլանյանին Գյումրի քաղաքի Շիրակացի 54 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Նունե Ասլանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.02.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ X ________ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2024 **թվականի** N374-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 17-ի <<Քաղաքացի Սերգեյ Ժորժիկի Գալստյանին պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց № 122ա հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 2.72 քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի շինությանները օրինական ճանաչելու մասին>> № 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով հիմք՝ (Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 06/02/2024 թվականի N Կ-06022024-08-0215 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 17-ի <<Քաղաքացի Սերգեյ Ժորժիկի Գալստյանին պատկանող Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց № 122ա հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 2.72 քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի շինությանները օրինական ճանաչելու մասին>> № 63-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) Նախաբանում, որոշման 1-ին կետում «Գալաստյանին» բառը փոխարինել «Գալստյանին» բառով:

09.02.2024

X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2024 **թվականի** N 373 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ № 24 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 31.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 3.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 0.97 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գուրգեն Հովհաննիսյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 409 տրված 20.01.2009թ. և № 1946 տրված 19.04.2022թ.) Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց № 24 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 31.69(երեսունմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 3.44(երեք ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որոնց վրա առկա 0.97(զրո ամբողջ իննսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Գուրգեն Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի և 22.1 կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Հովհաննիսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 5-ին N 8350 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Գուրգեն Հովհաննիսյանի(ծնված 1967 թվականի մայիսի 23-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Պուշկին փողոց № 24 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 3.44(երեք ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 0.97(զրո ամբողջ իննսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Գուրգեն Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց № 24 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 31.69(երեսունմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

09.02.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» փետրվարի 2024 **թվական** N 372-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԼԼԱ ԱՐԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԵՂՍԱԲԵՐԴ ԿԱՐԱՊԵՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սեյրան Վարուժանի Սահակյանը (անձնագիր՝ AS 0299931, տրված՝ 24.07.2018թ. 001-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Ղարիբջանյան խճ. 2/12 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Ալլա Արամի Մուրադյանի, Արմենուհի Արամի Մուրադյանի, Եղսաբերդ Կարապետի Մուրադյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հոկտեմբերի 3-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 7 փողոց 16 շենք թիվ 6 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Ալլա Արամի Մուրադյանին, Արմենուհի Արամի Մուրադյանին, Եղսաբերդ Կարապետի Մուրադյանին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 12 որոշմամբ «Անի» թաղամաս 7 փողոց 16 շենք թիվ 6 հասցեի բնակարանը հատկացվել է Արամ Աշոտի Մուրադյանի յոթ անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, հորը, մորը, կնոջը տղային, 2 աղջկան և տրվել թիվ 6 միասնական օրդերը:

Քաղաքացիներ Արուս Զաքարի Մուրադյանը, Աշոտ Մուրադի Մուրադյանը,Արամ Աշոտ Մուրադյանը մահացել են (հիմք՝ II –CL N 456246, II –CL N 432363. ԲԱ 453097 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 12 որոշմամբ տրված թիվ 6 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 8/63-963 գրությունը, «Բարեկամություն» համատիրության 2023 թվականի օգոստոսի 17-ի 0/65 տեղեկանքը, Ալլա Արամի Մուրադյանի, Արմենուհի Արամի Մուրադյանի, Եղսաբերդ Կարապետի Մուրադյանի լիազորագիրը (առանց նոտարի վավերացման) և անձնագրերի պատճենները, Աշոտ Արամի Մուրադյանի հայտարարությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ

մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացիներ Ալլա Արամի Մուրադյանի, Արմենուհի Արամի Մուրադյանի, Եղսաբերդ Կարապետի Մուրադյանի լիազորված անձ՝ Սեյրան Վարուժանի Սահակյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

